ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60,էլ հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

25.10.2016թ.
303-ի 7

ՀՀ առողջապահության նախարար
պարոն Լևոն Ալթունյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ալթունյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ խորհրդական և օգնական ունի առողջապահության նախարարը:
2. Նրանցից քանի՞սն են հասարակական հիմունքներով և քանի՞սը վճարովի հիմունքներով:
3. Որքա՞ն է կազմում առողջապահության նախարարի՝ յուրաքանչյուր խորհրդականի և օգնականի աշխատավարձը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան